ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԱՆԱ ՌՈՒԲԵՆԻ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2005-2013 ԹԹ.)

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Մանվելի Իսկանդարյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Կառլենի Կարապետյան
	պատմական գիտությունների թեկնածու Ռուդիկ Ֆելիքսի Յարալյան
Առաջատար կազմակերպություն՝	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հունիսի 27-ին, ժամը 12:00, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Համաշխարհային պատմության 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան 24/4):

Սեղմագիրն առաքված է 2022 թ. մայիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Իրանի Իսլամական Հանրապետության վեցերորդ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի ութամյա կառավարման շրջանը (2005-2013 թթ.) աչքի էր ընկնում որոշակի առանձնահատկություններով, հակասություններով և վայրիվերումներով: Նախագահ ընտրվելով՝ Մ. Ահմադինեժադը Իրանի քաղաքական կյանքում նոր փուլի մեկնարկի մասին էր հայտարարել, որը հետագայում պատմության մեջ մնաց որպես տնտեսական դժվարություններով և արտաքին քաղաքական ոլորտում խնդիրներով լեցուն շրջան: Գալով իշխանության Ահմադինեժադը երկրում արգելեց աշխարհիկության, ֆեմինիզմի և լիբերալիզմի շուրջ քննարկումները և շեշտը դրեց շիայական իսլամի ավանդույթներին ու իրանական ազգայնականությանը վերադառնալու ձգտման վրա:

Սոցիալական հավասարության և տնտեսական արդարության հասնելու խոստումները 2005-ի նախագահական ընտրություններում նպաստեցին Մ. Ահմադինեժադի հաղթանակին: Նախագահության ընթացքում նա որդեգրեց ֆինանսական և հարկաբյուջետային այնպիսի քաղաքականություն, որը թեև մասամբ նվազեցրեց եկամուտների անհավասարությունը, սակայն, միջուկային ծրագրով պայմանավորված, ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների համատեքստում հանգեցրեց երկրի տնտեսական իրադրության վատթարացման: Գաղտնիք չէ, որ ԻԻՀ-ը լուրջ մարտահրավերներ է առաջացնում ԱՄՆ շահերին Մերձավոր Արևելքում, իսկ միջուկային ծրագիրը շարունակում է անհանգստացնել միջազգային հանրությանը՝ հատկապես ԱՄՆ դաշնակից Իսրայելին:

Արդեն 2009 թ. հետընտրական գործընթացները նոր մարտահրավերների առաջ էին կանգնեցրել թե՛ Իրանին, թե՛ Արևմուտքին: Նախագահության երկրորդ շրջանում հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի և Մ. Ահմադինեժադի հարաբերությունները լարվել էին, և Խամենեիի մերձավորները, որոնք աջակցում էին Ահմադինեժադին, սկսել էին քննադատել նախագահին ու նրան սատարողներին: Մ. Ահմադինեժադը հաճախ անտեսում էր իր վարած քաղաքականության հետևանքների վերաբերյալ թե՛ քննադատների, թե՛ կողմնակիցների նախազգուշացումները: Մինչև օրս էլ բազմաթիվ վերլուծաբաններ և քաղաքագետներ փորձում են բացահայտել ու մեկնաբանել Մ. Ահմադինեժադ անձի և քաղաքական գործչի վարքագծի, գաղափարների ու հայտարարությունների հետևում թաքնված դրդապատճառները: Պատահական չէ, որ իր հակասական կերպարի ու ագրեսիվ հռետորաբանության հետևանքով նախագահը սեփական երկրում «անցանկալի քաղաքական գործիչ» է:

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մ. Ահմադինեժադի օրոք Իրանի ներքաղաքական կյանքում տեղի ունեցած իրադարձություններն առանձնահատուկ նշանակություն են ստացել՝ ակտիվացնելով իրանական ներքաղաքական շրջանակների միջև գործակցությունն ու արտաքին աշխարհի հետ Իրանի հարաբերությունները, նաև նոր թափ հաղորդելով դրանց:

Արդիականությունը պայմանավորված է նաև Իրանում տեղի ունեցող տվյալ ժամանակի քաղաքական գործընթացներով, որոնք երկրի իշխող վերնախավում հակասությունների և քաղաքական խմորումների պատճառ էին հանդիսանում: Մ. Ահմադինեժադի նախագահության ընթացքում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների վերլուծությունը հնարավորություն կտա առավել խորքային հասկանալ իրանական քաղաքական համակարգի հակասական միտումները և պարզել Իրանի ղեկավարության ռազմավարության ուղղվածությունը, որի հետևանքները նկատելի են նաև այսօր: Ասվածի համատեքստում առանցքային նշանակություն ունի նաև էթնիկ հիմնախնդիրների ուսումնասիրությունը, մասնավորապես՝ քրդական ու Ատրպատականի թյուրքախոս բնակչությանն առնչվող հիմնախնդիրները, որոնք ժամանակ առ ժամանակ բնորոշվել են անջատողական դրսևորումներով և արտաքին ուժերի կողմից օգտագործվել են որպես Իրանին ճնշելու հնարավոր գործիք:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ մինչև օրս ուսումնասիրության թեմայի շրջանակում որևէ համընդգրկուն ու ամբողջական հետազոտություն Հայաստանում կատարված չէ, ուստի թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալ, թե Մ. Ահմադինեժադի վարած ներքին քաղաքականությունը որքանով է ազդել Մերձավորարևելյան տարածաշրջանի գործընթացների, ինչպես նաև Հայաստանի հետ հարաբերությունների վրա:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում ԻԻՀ ներքաղաքական կյանքում տեղ գտած իրադարձություններն ու գործընթացները, որոնք ուղղակիորեն ներազդում էին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի և քաղաքական ուղեգծի վրա: Հատկանշական է, որ ներքաղաքական զարգացումներն ազդում էին նաև նախագահի արտաքին քաղաքական օրակարգի վրա՝ Հարավկովկասյան տարածաշրջանի և աշխարհի համար ձևավորելով նոր մարտահրավերներ ու հնարավորություններ: Մ. Ահմադինեժադի քաղաքականության արևելյան և տարածաշրջանային ուղեգծերը նոր ազդակներ են հաղորդել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ Իրանի հարաբերություններին:

Ըստ այդմ, մեր առջև խնդիր ենք դրել.

- բացահայտել Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին տեղ գտած ներքաղաքական գործընթացների բնույթն ու առանձնահատկությունները,
- համակարգված ուսումնասիրել ԻԻՀ ներքաղաքական, սոցիալական և տնտեսական գործընթացները, դրանք քննել ու ներկայացնել իրանական միջուկային ծրագրի և դրա հետ անմիջականորեն կապված՝ ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների համատեքստում,
- ներկայացնել և վերլուծել այն սոցիալ-գաղափարական հենքը, որի արդյունքում հետհեղափոխական Իրանում քաղաքական ամենաբարձր վերնախավի մակարդակում նկատվեց իրանական

ազգայնականության՝ քաղաքական խոսույթի դաշտ տեղափոխելու միտումը,

- վերլուծել քաղաքական ու գաղափարական իրողությունները, որի արդյունքում 2009 թ. սկիզբ առավ Կանաչ շարժումը, և այն պատճառներն ու գործընթացները, որոնց ընթացքում փոխվեց քաղաքական խմբավորումների միջև հավասարակշռությունը,
- անդրադառնալ մարդու իրավունքների, կանանց իրավունքների և ազատությունների սահմանափակումների, նաև մամուլի ու խոսքի ազատության հիմնախնդիրներին, որոնք նախագահ Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին ԻԻՀ ներքաղաքական կյանքում նոր դրսևորումներով ի հայտ եկան,
- քննության առնել Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին իշխանությունների առջև ծառացած Ատրպատականի և Իրանական Քրդստանի հիմնախնդիրները, ինչպես նաև երկրի թալիշ բնակչության կողմից թալիշական նահանգ ստեղծելու տեսլականը:

Էթնիկական տեսանկյունից սրանք այն հիմնախնդիրներն էին, որոնք առավել սրվեցին և ուշադրության կենտրոնում հայտնվեցին 2005-2013 թթ.:

Ատենախոսության թեմայի նորույթը: ԻԻՀ ներքաղաքական կյանքին և հատկապես Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանին առնչվող որևէ համապարփակ ուսումնասիրություն հայկական գիտական շրջանակներում մինչ այժմ չի իրականացվել: Ուստի ատենախոսությունը 2005-2013 թթ. Իրանի ներքաղաքական զարգացումներին նվիրված և առաջին անգամ իրականացված ամբողջական ու համակարգված ուսումնասիրություն է, ինչպես նաև որոշ հիմնախնդիրների նորովի գնահատման փորձ:

Ատենախոսությունն ամփոփում և հիմնավորում է Իրանի ներքին քաղաքականության և միջուկային ծրագրի ռազմավարության հիմնական բնութագրերն ու սկզբունքները, բացահայտում այն կրոնագաղափարական հենքը, որը որոշիչ ազդեցություն է ունեցել Մ. Ահմադինեժադի ներքաղաքական առաջնահերթությունների ձևավորման վրա: Ուսումնասիրվում և վերլուծվում են Մ. Ահմադինեժադի վարած քաղաքականության հիմնական ուղղություններն ԻԻՀ ներքաղաքական և սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների համատեքստում՝ ցույց տալով դրանց իրականացման հնարավոր սցենարները, որոնք համընկնում էին Իսլամական հեղափոխության գաղափարներին և իրանական ազգայնականության վերելքին հավատարիմ մնալու Մ. Ահմադինեժադի ձգտմանը:

Փաստերի համադրման ու վերլուծության արդյունքում ցույց է տրվում, որ ժամանակակից աշխարհի պոպուլիստ առաջնորդի տիպիկ օրինակ էր Մ. Ահմադինեժադը, ով տնտեսական ձախողումների ու քաղաքական խմորումների հետևանքները փորձում էր չեզոքացնել պոպուլիստական հայտարարություններով ու մոտեցումներով: Նա Իրանի աշխարհիկ այն նախագահն էր, որն իր պաշտոնավարման տարիներին փորձում էր փոխել իսլամական կառավարման բնույթը՝ ձգտելով երկիրը վերածել աշխարհիկ

հանրապետության, թեպետ, մինչ նախագահական աթոռը ստանձնելը, լինելով ծայրահեղ պահպանողականների խմբակցության ներկայացուցիչ, հայտարարում էր «Իսլամական հեղափոխության նոր ալիքի» տարածման և խոմեյնիական գաղափարներին նոր շունչ հաղորդելու մասին:

Ատենախոսության մեթոդաբանական հենքը: Ատենախոսության հիմքում ընկած են տարատեսակ աղբյուրներում, գրականությունում, պաշտոնական փաստաթղթերում, հարցազրույցներում ու հայտարարություններում տեղ գտած փաստերի քննական և վերլուծական մեթոդները: Ատենախոսությունը շարադրվել է՝ հիմնվելով խնդրո առարկային վերաբերող փաստական նյութի, սկզբնաղբյուրների, պատմական ու քաղաքական աղբյուրների, ինչպես նաև մասնագիտական գրականության վերլուծության, համադրության և ընդհանրացման քաղաքագիտական մեթոդաբանության վրա:

Ատենախոսությունում օգտագործվում է փաստերը դիտարկելու համաժամանակյա մեթոդը պատմաքաղաքական միջավայրի համատեքստում: Սա հնարավորություն է տվել մի շարք դեպքերում պարզել Մ. Ահմադինեժադի ներքին քաղաքական նախաձեռնությունների առաջացման կամ դրանց բացակայության պատճառները, հետևանքներն ու զարգացումները: Կիրառված մեթոդների շարքում անհրաժեշտ է նշել ընդհանուր գիտական ու պատմական հետազոտության հատուկ մեթոդները: Ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել է ինդուկցիայի մեթոդը, որը թույլ է տալիս մասնավորից անցում կատարել ընդհանուրին: Ինդուկցիայի առանձնահատկությունը, որպես հետազոտության մեթոդ, այն է, որ ինդուկցիայի արդյունքում ստացած գիտելիքները միշտ էլ հավանականության բնույթ ունեն:

Առանձին տիպիկ գործոնների վերլուծության հիման վրա կատարվել են հետևյալ կարևոր ընդհանրացումները.

- դեդուկցիայի շնորհիվ եզրակացություններ են կատարվել ընդհանուրից դեպի մասնավոր,
- վերլուծությունն ու սինթեզը հնարավորություն են տվել վերլուծել իրանական միջուկային ծրագրի շուրջ ծագած հակասություններն ու ճգնաժամերը՝ վերհանելով ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների բացասական հետևանքները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է կիրառական նշանակություն ունենալ ԻԻՀ նորագույն պատմության, ներքաղաքական զարգացումների, կրոնական, սոցիալ-մշակութային, մարդու իրավունքների, միջէթնիկ իրավիճակների, տնտեսական ու միջուկային իրադրության ընկալման և զարգացման վերաբերյալ հետագա պատմական ու քաղաքագիտական հետազոտությունների համար: Ասվածի համատեքստում կարող են կազմվել նոր գիտամեթոդական և ուսումնական ձեռնարկներ: Աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել նաև դասախոսությունների, գործնական պարապմունքների, վերապատրաստման դասընթացների և տարածաշրջանային ուսումնասիրությունների համար, որոնք նվիրված կլինեն Իրանի ընդհանուր ռազմավարությանն ու տարածաշրջանային

քաղաքականությանը, ինչպես նաև կարող են հետաքրքրել Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, արտաքին և միջազգային հարաբերություններով զբաղվող գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումներին:

Ուսումնասիրության հիմնական եզրակացությունները կարող են օգտագործվել ժամանակակից Իրանի ներքաղաքական, արտաքին քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային առաջնահերթություններն ու գործընթացները դիտարկելիս:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է Մ. Ահմադինեժադի նախագահության տարիները՝ 2005-2013 թթ.: Փաստացի նրա նախագահության առաջին շրջանն ընդգրկել է 2005-2009, երկրորդը՝ 2009-2013 թթ.: Սակայն, վերջինիս նախագահության շրջանի ընդհանուր սոցիալ-քաղաքական, տնտեսական և միջուկային ծրագրին առնչվող գործընթացներն ու զարգացումներն առավել խորքային ընկալելու, զուգահեռներ անցկացնելու և վերլուծելու անհրաժեշտությունից ելնելով, անդրադարձ կա նաև 2005-ից առաջ Իրանում կատարված ներքաղաքական որոշ իրադարձությունների:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնում՝ արժանանալով դրական կարծիքի, և երաշխավորվել պաշտպանության: Քննարկվող հիմնական դրույթները զեկուցումներով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության բովանդակային որոշ դրույթներ հեղինակի կողմից կիրառվել են նաև «Ուսումնասիրվող երկրի պատմություն (Իրան)» և «Ուսումնասիրվող տարածաշրջանի պատմություն (թալիշ և քուրդ ժողովրդի պատմություն)» դասընթացների շրջանակներում, Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնում: Ատենախոսության որոշ հիմնադրույթներ հրատարակվել են գիտական հոդվածներում (հրատարակությունների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում):

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երեք գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների, ենթամասերի, եզրակացություններից, համառոտագրությունների, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերից:

Ներածություն բաժնում ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, տեսական-մեթոդաբանական հենքը, կիրառական նշանակությունը, ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ աղբյուրների և գրականության տեսության վերլուծությունը:

Հարկ է նշել, որ ատենախոսության ամբողջ նյութը հիմնականում քաղվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն, պարսկերեն պաշտոնական փաստաթղթերից,

մենագրություններից, ամսագրերից, հարցազրույցներից, ելույթներից, գիտական մամուլից և համացանցային աղբյուրներից:

Մահմուդ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանը (2005-2009) առաջին գլխում ներկայացվում է Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում Իրանի սոցիալ-քաղաքական և տնտեսական իրադրությունը: Գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլուխը վերնագրված է **«Սոցիալ-քաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում»**: Այստեղ ներկայացվում են 2005 թ. նախագահական ընտրություններին ընդառաջ Իրանում տիրող սոցիալ-քաղաքական իրադրությունը, Մ. Ահմադինեժադի ռազմական ու քաղաքական բեմելը: Հոգևոր վերնախավը գիտակցում էր, որ նախկին նախագահներ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին (1989-1997) և Մոհամմադ Խաթամին (1997-2005) երկրի ներսում իրենց դերի և ազդեցության համար լուրջ խոչընդոտ կարող էին լինել, հետևաբար, քաղաքական կյանքում «սպառելով իրենց դերակատարությունը», ժամանակն էր, որ հեռանան: Արդյունքում վերնախավում նոր պոպուլիստ-առաջնորդի համար առիթ ստեղծվեց, որը կշահեր հասարակության համակրանքը, կվերականգներ խոմեյնիական ավանդույթները՝ փոխելով նախորդ նախագահների քաղաքական կուրսը, կպահպաներ հոգևոր առաջնորդի դերն ու իշխանությունը: Եվ ահա, 2005-ի նախագահական ընտրություններին ընդառաջ Թեհրանի քաղաքապետ Մ. Ահմադինեժադն առաջադրեց իր թեկնածությունը: Նա նախագահական քարոզարշավի վերջին շրջանում հստակ ներկայացրել էր ԻԻՀ ներքին ու արտաքին քաղաքականության կարճաժամկետ և երկարաժամկետ այն ծրագրերը, որոնք պետք է կյանքի կոչվեին: Դրանցում կարմիր թելի նման առկա էր Իսլամական հեղափոխության գործին հավատարմության թեզը: Ընդհանուր առմամբ, նախագահական ընտրություններում Մ. Ահմադինեժադի հաղթանակն ԻԻՀ ներքաղաքական կյանքում նոր ժամանակաշրջանի մեկնարկն էր:

Ենթագլխում ուսումնասիրելով Ահմադինեժադի նախագահության շրջանի սոցիալ-քաղաքական առանցքային կետերը՝ գնահատվել են նրա վարած քաղաքականության արդյունավետությունն ու թերացումները: Ցույց են տրվել այն գործընթացներն ու գաղափարական նախադրյալները, որոնց արդյունքում իրանական քաղաքական էլիտայում փոխվեց ուժերի հավասարակշռությունը, ինչն էլ պատճառ դարձավ, որ Իրանի և դրա շուրջ տեղի ունեցող զարգացումների վրա սևեռվի միջազգային հանրության, ՋԼՄ-ների, ԱՄՆ ու եվրոպական երկրների ուշադրությունը: Մ. Ահմադինեժադին հաջողվեց որոշակի հսկողություն սահմանել դժգոհ երիտասարդների և ուսանողների նկատմամբ՝ նրանց մտահոգությունների թիրախ դարձնելով ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ հարաբերությունները:

«Տնտեսական իրադրությունն Իրանի Իսլամական Հանրապետությունում Մ. Ահմադինեժադի կառավարման առաջին

շրջանում» վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացվում է 2005-2009 թթ. Իրանի տնտեսության ընդհանուր պատկերը՝ շեշտադրելով Մ. Ահմադինեժադի գաղափարաքաղաքական մոտեցումները՝ ուղղված երկրի տնտեսական իրադրության բարելավմանը և Իրանի միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների բացասական հետևանքների դիմակայմանը: Ահմադինեժադի նախագահության սկզբնական շրջանում Իրանի տնտեսությունը գրանցում էր դրական ցուցանիշներ և կայուն էր: Նավթի գնաճը[1] նպաստում էր, որ Ահմադինեժադը կատարի իր նախընտրական խոստումները՝ բարելավելով սոցիալապես անապահով իրանցիների ֆինանսական վիճակը:

Նախագահության ընթացքում Մ. Ահմադինեժադը որդեգրել էր ֆինանսական և հարկաբյուջետային քաղաքականություն, որը նպատակ ուներ կյանքի կոչել իր նախընտրական խոստումները: Նա իր կաբինետ էր բերել Իսլամական հեղափոխության պահապանների ու Բասիջ աշխարհազորայինների բազմաթիվ հրամանատարների և նպաստել մեծ թվով մասնավորեցված ընկերությունների վաճառքին այդ հաստատություններին և դրանց տնտեսական ստորաբաժանումներին: Արդյունքում հեղափոխական գվարդիան ակտիվորեն ներգրավվում է Իրանում տնտեսական ու ֆինանսական ցանկացած գործունեության մեջ: Միաժամանակ ցույց է տրվում, որ, չնայած նախընտրական քարոզարշավի ընթացքում դեռևս թեկնածու Մ. Ահմադինեժադի առաջ քաշած տնտեսական բարենորոգման ծրագրերը նպաստել էին վերջինիս հաղթանակին, այդուհանդերձ նախագահության առաջին շրջանի ավարտին երկրում բավական բարդ տնտեսական իրադրություն էր ձևավորվել: Հենց տնտեսական քաղաքականության ասպարեզում էին ի հայտ եկել առաջին ճաքերն Ա. Խամենեի-Մ. Ահմադինեժադ հարաբերություններում առ այն, թե ինչպես պետք է վերականգնել Իրանի տնտեսությունը:

«Իրանական ազգայնականության խոսույթը Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին (2005-2013)» վերնագրով երրորդ ենթագլխում ներկայացվում են Մ. Ահմադինեժադի ազգայնական գաղափարներն ու իրանական ազգային գիտակցության վերելքը, ինչպես նաև աշխարհիկ իշխանությունն իսլամական կառավարման համակարգի հետ համադրելու փորձերը: Իսլամական հանրապետության գաղափարախոսները չեն մերժել ազգայնականությունը, փոխարենը նրանք ձգտում էին ազգայնականությունը սահմանել այնպես, որ այն ենթակա դեր կատարեր գերակշռող իսլամական սկզբունքների համեմատ: Իրանա-իրաքյան պատերազմից հետո ՋԼՄ-ների դերի մեծացումն ու դրա արդյունքում քաղաքական գիտակցության բարձրացումն ազգային ինքնության բնույթի շուրջ ակտիվ քննարկումների պատճառ էին դարձել: Հավասար, եթե ոչ ավելի կարևոր էր կրոնի, մասնավորապես՝ իսլամի ու ինքնության միջև կապը: Ոմանք այս զարգացումը

[1] Ահմադինեժադի պաշտոնավարման սկզբնական շրջանում նավթի գինը մեկ բարելի համար կազմում էր $ 60:

մեկնաբանել են որպես ճնշող իսլամական դոգմաների դեմ հասարակության արձագանք:

Իրանական ազգայնականության խոսույթը հիմնված է շարունակական և թարմացվող գաղափարախոսության վրա, և իր նախագահության տարիներին Մ. Ահմադինեժադը, ըստ էության, ամենից բացահայտ խոսել է իրանական պատմական անցյալին վերադառնալու և ազգային գաղափարների վերահիմաստավորման անհրաժեշտության մասին: Ըստ էության, նրա կառավարման տարիներին իրանական ազգայնականության խոսույթը ներառում էր երեք հիմնական տարր՝ պարսկական ազգայնականությունը, իսլամիզմը և հեղափոխական հակակայսերապաշտությունը: Ընդ որում, նշված հանգամանքը շատ ավելի վառ արտահայտվել է Մ. Ահմադինեժադի կառավարման երկրորդ շրջանում (նախագահության առաջին շրջանում դա հիմնականում դրսևորվում էր ելույթների և հայտարարությունների տեսքով), ինչի համար ամենայն հավանականությամբ խթան է հանդիսացել 2009-ի հետընտրական գործընթացներում ընդդիմության կողմից իրանական ազգայնականության և ինքնության ընդգծված արծարծումը:

Գլուխ երկրորդը, որը վերնագրված է Մահմուդ Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանը (2009-2013), քննության է ենթարկում Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանը, Իրանի սոցիալ-քաղաքական և տնտեսական իրադրությունը: Գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Մ. Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները. Կանաչ շարժում» վերնագրով առաջին ենթագլխում քննության է առնվում այն քաղաքական ու գաղափարական համատեքստը, որի արդյունքում սկիզբ առավ Կանաչ շարժումը: Ուսումնասիրվել են պատճառներն ու գործընթացները, որոնց ընթացքում փոխվել է քաղաքական խմբավորումների միջև հավասարակշռությունը, քանի որ հատկապես ԱՄՆ և արևմտյան որոշ վերլուծաբանների ընկալմամբ՝ Իրանում ժողովրդավարության մակարդակը բավականին ցածր էր: Ատենախոսի դիտարկմամբ՝ նման կարծրատիպը չափազանցված է՝ պայմանավորված Իրան-Արևմուտք հակասություններով, և, ի տարբերություն շատ այլ մուսուլմանական (նաև ոչ մուսուլմանական) երկրների, Իրանում առկա են ժողովրդավարացման զարգացմանը նպաստող որոշակի գործոններ:

Ենթագլխում ցույց է տրվում, որ 2009-ի հունիսյան ընտրություններն Իրանում հանգեցրել են որոշ գործընթացների ակտիվացմանը, որոնք կարևոր նշանակություն են ունեցել Իսլամական Հանրապետության վարչակարգի հետագա գործողությունների համար: Դրանք էին.

1. ԻԻՀ կառավարության և հասարակության լայն շրջանակների միջև աճող ճաքերը:
2. Աննախադեպ իրադրությունը, երբ մի կողմից լարված հարաբերություններ էին նկատվում հոգևոր առաջնորդի և Մ.

Ահմադինեժադի միջև, իսկ մյուս կողմից երկրի ներսում ծայր առած դժգոհությունները մեղմելու և ներքին ու արտաքին քաղաքականության բնականոն ընթացքը նոր ցնցման չենթարկելու նպատակով հոգևոր առաջնորդը հանդես էր գալիս նախագահի պաշտպանությամբ:

3. «Խաղի կանոնների» ի հայտ եկող փոփոխությունը, որը նախկինում ծառայում էր որպես անվտանգության երաշխիք խմբակցությունների միջև պայքարում:

Կանաչ շարժման ամբողջ ընթացքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի.

1. Քաղաքային (մասնավորապես՝ Թեհրան) միջին խավի երիտասարդության, բարեփոխիչների և Մ. Ահմադինեժադի առաջին նախագահական ժամկետից (2005-2009) հիասթափվածների ակտիվացում (2009, հունիս):
2. Շարժման զարգացման երկրորդ փուլ, երբ հայտարարվել էին ընտրությունների արդյունքները, և բնակչությունը դրանք կեղծված էր համարել (2009, հունիսի 12): Սա բնութագրվում է որպես բաց անհնազանդություն:
3. Կանաչ շարժման պառակտում, երբ իշխանությունները հետզհետե խեղդում էին շարժումը, ղեկավարներից երկուսը մեկուսացած էին, իսկ լոկալ բողոքի ակցիաները ճնշվում էին:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը կրում է **«ԻԻՀ-ում համակարգային փոփոխությանն ուղղված Մ. Ահմադինեժադի քաղաքականությունը»** վերնագիրը: Կանաչ շարժմանը հաջորդած շրջանում Իրանի ներքաղաքական կյանքում խորացել էին հոգևոր առաջնորդի և նախագահի միջև հակասությունները, որոնք ժամանակ առ ժամանակ զգալ էին տալիս նախագահի վարած քաղաքականության, «Իսլամական երկրորդ հեղափոխության» գալստյան և թաքուցյալ իմամ Մահդիի[2] հետ անմիջական կապի մեջ լինելու հայտարարությունների համատեքստում: Ահմադինեժադի կառավարման սկզբնական շրջանից ի վեր վարչակարգի ծայրահեղական թևի ներկայացուցիչները փորձում էին, մեսսիական հռետորաբանությունն օգտագործելով, կյանքի կոչել Իսլամական հեղափոխության ակունքներին վերադառնալու գաղափարները: Սա իր հերթին պատրվակ էր Իրանում մարդու իրավունքների հետագա վատթարացման, նաև «Մշակութային երկրորդ հեղափոխության» ի հայտ գալու: Ստացվում է, որ կառավարությունը նմանատիպ գաղափարներով որոշակիորեն սահմանափակում էր մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունները՝ փորձելով հասարակական կյանքում արմատավորել իսլամական խիստ նորմերն ու իդեալները: Ըստ

[2] Իմամ Մահդիի հետևորդները կազմում են իրանական բնակչության մեծամասնությունը և հավատում են 12 իմամի գոյությանը՝ պնդելով, որ վերջին իմամը թաքնվել է 1100 տարի առաջ, և նրա վերադարձը կխորհրդանշի մարդկության փրկությունը:

էության, նման վտանգավոր հայտարարությունները հեռահար մակարդակում միտում ունեին իրանական հասարակության աչքում ինչ-որ չափով հեղինակազրկել և նվազեցնել հոգևորականների դերն ու ազդեցությունը և Մ. Ահմադինեժադի հետագա պաշտոնավարման համար պարարտ հող նախապատրաստել:

Ենթագլխում ցույց է տրվում, որ 2011-2012 թթ. Իրանի ներքաղաքական կյանքի ամենադժվար և վտանգներով լեցուն շրջանն էր, երբ երկիրը կանգնած էր լուրջ մարտահրավերի առջև: Նախկինում Իսլամական Հանրապետության ոչ մի նախագահ այդքան բացահայտ մարտահրավեր չէր նետել իշխող կրոնական համակարգին և այդքան անխոհեմորեն չէր փորձել հոգևոր վերնախավից զավթել իշխանության լծակները: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ դա չէր հաջողվելու նաև Մ. Ահմադինեժադին: Եթե միջուկային ծրագրի շուրջ ստեղծված ճգնաժամի պայմաններում իրանական իշխող վերնախավի կամ Սահմանադրության փոփոխություն տեղի ունենար, ապա երկիրը կհայտնվեր արտաքին ճնշման տակ, ուստի ո՛չ հոգևոր առաջնորդը և ո՛չ էլ իրանական բարձրաստիճան պաշտոնյաները չէին կարող թույլ տալ կառավարող համակարգի՝ տարիներով արմատացած ավանդույթների ամենաչնչին փոփոխություն անգամ:

«Իրանական միջուկային խնդրի ազդեցությունն ԻԻՀ ներքաղաքական իրադրության վրա ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների համատեքստում» վերնագիրը կրող երրորդ ենթագլխում քննության է առնվում Իրանի միջուկային ծրագրի և ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների ազդեցությունն ԻԻՀ ներքին քաղաքականության ու տնտեսության վրա: Ենթագլուխն իր հերթին ունի երկու ենթաբաժին՝ «Տնտեսական հետևանքներ» և «Քաղաքական հետևանքներ», որոնք առանձին-առանձին անդրադառնում են ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների հետևանքով Իրանի տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած իրադարձություններին:

Մ. Ահմադինեժադի՝ նախագահության ստանձնման և իրանական քաղաքական ասպարեզում գլխավորած նոր պահպանողականների խմբակցության դերակատարության բարձրացմամբ ազդարարվել էր իրանական միջուկային խնդրում արևմտյան պահանջների նկատմամբ իրանական՝ որոշակի առումով «համակերպվողական» և «գործակցային» քաղաքականության ավարտը, և, որպես քաղաքական ուղենիշ, որդեգրվել էին ճնշումներին հակազդելն ու միջուկային ծրագրի հետագա զարգացման հեռանկարի կարևորումն անկախ հետևանքներից: Տարբեր գերակայություններ ունեցող արևմտյան երկրների կողմից տարատեսակ գործիքակազմերի կիրառմամբ պատժամիջոցները կարևոր դեր էին խաղացել Իրանի միջուկային ծրագրի զարգացման ընթացքը դանդաղեցնելու և դրա շուրջ բանակցելու համար: Ընդ որում, պետք է նշել, որ, միջուկային ծրագրով պայմանավորված, ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցները կապված էին ոչ միայն տնտեսության հետ, այլև առնչվում էին մարդու իրավունքներին ու խոսքի ազատությանը: Իրանի միջուկային ծրագրի շրջանակում, խմբակցային տարաձայնություններից զատ,

իրանական քաղաքական գործիչների համար այդ պատժամիջոցները նախագահի և նրա թիմի վարած քաղաքականության նկատմամբ դժգոհություն արտահայտելու առիթ էին:

Ընդհանուր առմամբ, Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում Իրանի դեմ կիրառված պատժամիջոցները երկու հիմնական նպատակ էին հետապնդում՝ սահմանափակել միջուկային և հրթիռային ծրագրերը ֆինանսավորելու Թեհրանի հնարավորությունները և Իրանի իշխանություններին հարկադրել շարունակել բանակցությունները միջուկային խնդրի շուրջ՝ որպես հետևանք, փոխելով դիրքորոշումը միջուկային հետազոտությունների զարգացման հեռանկարների վերաբերյալ: Ամերիկյան և եվրոպական պատժամիջոցները մեկ այլ նպատակ էլ էին հետապնդում, ինչը ենթադրում էր փոխել քաղաքական ուժերի հավասարակշռությունն Իրանի ներսում՝ աջակցելով ազատական (և այդ պատճառով՝ համեմատաբար արևմտամետ) ուժերին՝ հետագայում Իրանի քաղաքական կյանքում նրանց դերի բարձրացմամբ: Ենթագլխում ցույց է տրվում, որ Իրանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները միայն մասամբ տվեցին Արևմուտքի համար ցանկալի արդյունք: Տնտեսական պատժամիջոցները սոցիալական առումով վնասել էին շարքային քաղաքացիներին և խոչընդոտներ ստեղծել կառավարության գործունեության համար: Թեև իրանական կառավարությունը գոյատևելու համար նոր ուղիներ էր գտնում, սակայն երկիրը փաստացիորեն մեկուսացած էր աշխարհից, ուստի Իրանի կառավարությունը միջազգային հանրության հետ լարված հարաբերությունները չխորացնելու համար համաձայնեց շարունակել բանակցությունները միջուկային ծրագրի շուրջ:

Մարդու իրավունքների պաշտպանության եվ էթնիկ խնդիրները Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում վերնագրով երրորդ գլխում ներկայացվում են Ահմադինեժադի նախագահության տարիներին Իրանի առջև ծառացած՝ մարդու իրավունքների, խոսքի ազատության և էթնիկական խնդիրները: Գլուխը բաղկացած է 2 ենթագլխից և 4 ենթաբաժնից:

«Մարդու իրավունքներն ու խոսքի ազատությունն ԻԻՀ-ում Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում» վերնագրով առաջին ենթագլխում ներկայացվում են մարդու իրավունքները, կանանց իրավունքների ու ազատությունների սահմանափակումները, ինչպես նաև մամուլի և խոսքի ազատության հիմնախնդիրները: Եթե մարդու իրավունքների ազատությունների ու սահմանափակումների դիտանկյունից անհրաժեշտ լինի նկարագրել Իրանը Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին, ապա այն կարելի է համարել երկրի հասարակական-քաղաքական կյանքից «մտավոր վերնախավի դուրս մղման և նրանց գործունեության սահմանափակման» շրջան: Կարող ենք ենթադրել, որ Իրանում մարդու իրավունքների կոպիտ խախտումների մասին մեղադրանքներն արևմտյան լրատվամիջոցների և ԱՄՆ հակաիրանական քաղաքականության մի մասն էին, որոնք ուղղված էին միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների փոխլրացմանը: Գաղտնիք չէ, որ թե՛ Իրանում, թե՛

դրա սահմաններից դուրս մարդու իրավունքների պաշտպաններն ու վերլուծաբանները բարձրաձայնել էին երկրի ներսում մարդու իրավունքների ու խոսքի ազատությունների սահմանափակումներին առնչվող խնդիրները, սակայն կարծում ենք, որ արևմտյան ՀԼՄ-ները դրանք երբեմն խիստ ուռճացված էին ներկայացնում: Թեև երկրի ներսում կանանց սոցիալ-քաղաքական ներգրավվածությունը դեռևս ցածր է տղամարդկանց ներգրավվածությունից, սակայն աստիճանական բարելավման միտումներն ակնառու են:

Ժամանակի ընթացքում լրագրողների նկատմամբ սահմանափակումները ևս աճեցին, ավելացան հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման այլընտրանքային մեթոդները: 2000-ականներից անկախ թերթերն արմատախիլ անելու արշավը շատ լրագրողների ստիպեց նահանջել տպագիր մամուլի ասպարեզից և փոխարենն աշխատանք իրականացնել համացանցային կայքերում, ինչը հնարավորություն է տալիս խուսափել կառավարության գրաքննությունից և ինչ-որ չափով զերծ մնալ գաղափարների ու խոսքի ազատ արտահայտման սահմանափակումներից:

Ենթագլխում ցույց է տրվում, որ խոսքի և մամուլի ազատությունների սահմանափակումները դարձել էին առավել ակնհայտ և քննարկումների կիզակետում հայտնվել էին 2009-ի նախագահական ընտրություններից հետո, երբ ճնշվում էին Կանաչ շարժման բողոքի ակցիաները: Անհատի կողմից գաղափարներն ու համոզմունքներն ազատ արտահայտելու հնարավորության վրա դրված կառավարական սահմանափակումները պատճառ էին դարձել քաղաքացիների, ակտիվիստների ու լրագրողների բանտարկության:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է **«Էթնիկ հիմնախնդիրները Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին»:** Իրանական ներքաղաքական զարգացումների օրակարգում առանձնակի ուշադրության է արժանի էթնիկ հիմնախնդիրը: Քննության կարևոր նյութ է Իրանի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում էթնիկ ազգայնականների գործունեությունը, որում տնտեսական ու կրոնական իրավիճակը նկատելիորեն տարբերվում էր Իրանի մյուս նահանգներից, որտեղ արտաքին ուժերի սանձազերծած սադրանքների հնարավորությունը կարող էր նշանակալից լինել: Իրավիճակը բարդանում էր «տարանջատված ժողովուրդների» (իռեդենտիզմ) առկայությամբ և հարևան երկրների էթնիկ խմբերի բնական ցանկությամբ՝ միավորվել մեկ ամբողջության մեջ՝ Իրանի կազմից դուրս: Մի կողմից Իրանը հնարավորություն էր ստանում ազդել հարևանների վրա, մյուս կողմից հարևանները կարող էին Իրանում «իրենց» էթնիկ խմբին դրդել բախումների: Ենթագլխում ներկայացվում են Իրանի ընդհանուր էթնիկ պատկերը, Իրանի ազգային և կրոնական խմբերի շրջանում անջատողականության աճող ահազանգերը: Այս ենթագլուխն իր հերթին բաղկացած է չորս ենթաբաժնից:

«Քրդական հիմնախնդիրն ԻԻՀ-ում Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին» առաջին ենթաբաժնում ներկայացվում են «Մեծ Քրդստան» ստեղծելու ծրագիրը, Իրանում քրդերի սոցիալ-քաղաքական իրադրությունն ու

իրանական իշխող վարչակարգի դեմ բողոքները: Քրդական ազգայնականության այս, ըստ էության, անջատողական միտումը որոշ դեպքերում ուղղակիորեն և անուղղակիորեն խթանվում է Իրանի տարածաշրջանային և արտատարածաշրջանային հակառակորդների ու մրցակիցների կողմից: Ըստ էության, Իրանի քուրդ անջատողականներն անհանգստանում էին, որ տարածաշրջանում Իրանի դիրքերի ամրապնդմանը զուգընթաց «Արևելքի» (իրանական) և «Հարավային (Իրաքի) Քրդստանը» կարող էր հայտնվել շիաների ազդեցության տակ: Քուրդ ակտիվիստները մտավախություն ունեին, որ Իրանի կառավարությունը ծրագրում էր ստեղծել տարածաշրջանային շիայական գերտերություն, որը ոչնչացնելու էր սուննի քուրդ ժողովրդի մշակութային և կրոնական արժեքները:

Ցույց է տրվում, որ քրդաբնակ շրջանների սոցիալ-տնտեսական իրադրության բարելավման նպատակով իրանական իշխանությունները փորձում էին զարգացնել քրդական շրջանների ենթակառուցվածքն ու տնտեսությունը, որի հիմքը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն են, ինչպես նաև արհեստագործական արտադրությունը:

«Պանթյուրքականության խնդիրն ԻԻՀ-ում Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին» վերնագրով երկրորդ ենթաբաժինը կենտրոնանում է Իրանի տարածքում համաթուրանական[3] գաղափարների ազդեցության տակ գտնվող թյուրքախոս ատրպատականցիների որոշակի խմբերի ակտիվացման վրա: Նրանք ձգտում էին և այժմ էլ ձգտում են էթնոլեզվական ու մշակութային անկախության՝ ի հակադրություն իրանական իշխանությունների և մեծամասնություն կազմող ատրպատականցի այն բնակչության, որոնք Իրանի կազմում խաղաղ գոյակցության և իշխող վարչակարգի կողմնակիցներ էին: «Ատրպատականցի» և «ոչ ատրպատականցի» եզրույթների բախման համատեքստում առաջանում էր Իրանի ներքին անվտանգությանը սպառնացող հնարավոր և առկա վտանգների բացահայտման ու գնահատման անհրաժեշտություն:

Իրանում ատրպատականցիների բողոքի ակցիաներն ու հակակառավարական ընդվզումները մեծամասամբ հրահրվում էին Ադրբեջանի ու Թուրքիայի իշխանությունների կողմից: Այս ամենով հանդերձ, իրանական իշխանություններն ամբողջովին վերահսկում էին իրավիճակը. ճնշվում էին զանգվածային գործողությունների ու բողոքի ակցիաների փորձերը, ձերբակալվում՝ ատրպատականցի ակտիվիստները, վերահսկվում՝ հասարակական կազմակերպությունների ղեկավարների սոցիալ-քաղաքական գործունեությունը: Ինչ վերաբերում է հարևան պետություններին, ապա այդ երկրների ներքին իրավիճակի վրա Իրանն ուներ ճնշման սեփական լծակները, ինչպիսիք էին Ադրբեջանում շիայական գործոնը, այն է՝ Իսլամական

[3] Պանթյուրքականությունն ազգային-շովինիստական գաղափարախոսություն է, ըստ որի՝ թյուրքախոս բոլոր ժողովուրդները ենթադրաբար մեկ ազգ են և պետք է միավորվեն Թուրքիայի տիրապետության տակ դառնալով մեկ պետություն:

հեղափոխության արտահանման սպառնալիքը, և Թուրքիայում էթնիկ հակամարտությունները, որոնք Իրանին թույլ էին տալիս պահպանել ուժերի հավասարակշռությունը:

«ԻԻՀ-ում Թալիշ նահանգի ստեղծման ներքաղաքական խոսույթը Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին» վերնագրով երրորդ ենթաբաժինը ներկայացնում է Իրանում թալիշական նահանգ ստեղծելու ծրագրի պատմական հենքը, դրա իրականացման հնարավորությունները, ծրագրի իրականացման թեր և դեմ կարծիքները, նաև անկատար մնալու պատճառները: Այս նահանգի ստեղծումը կարելի էր համարել «տարածաշրջանային կառավարում կամ լուծում», այսպես կոչված, Ադրբեջանի Հանրապետության ծավալապաշտական նկրտումների համատեքստում: Քանի որ թալիշաբնակ տարածքներն աշխարհագրական առումով բաժանված են երկու՝ իրանական ու ադրբեջանական կամ Հյուսիսային ու Հարավային Թալիշստանի, Ադրբեջանի անկախացումից հետո թալիշաբնակ տարածքներում ծրագրված հակաթալիշական քաղաքականություն և աշխարհաքաղաքական պայքար են տարվում թալիշների ու թալիշերենի վերացման ուղղությամբ: Ասվածի համատեքստում թալիշական նահանգի ստեղծումը կարող էր պատասխան լինել Ադրբեջանի Հանրապետության կողմից իրականացվող ծրագրված հակաիրանական և համաթուրանական գործողություններին:

Ենթաբաժնում ցույց է տրվում, որ հատկապես 2009-ի նախագահական ընտրություններից հետո ծագած բողոքի ակցիաները և իրանական կառավարող վերնախավում առկա տարաձայնություններն արգելակում էին երկրի ներսում ցանկացած վարչական փոփոխություն, իսկ թալիշական նահանգի ստեղծումը կարող էր տարածաշրջանում այնպիսի իրադրություն ձևավորել, որը նախադեպ կդառնար ինչպես Իրանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս էթնիկ խմբերի ակտիվացման համար:

«Իրանի հայ համայնքն ու Հայոց ցեղասպանության խոսույթը Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին» չորրորդ ենթաբաժնում ներկայացվում է Հայոց ցեղասպանության խոսույթը, որի ճանաչման գործընթացը նաև Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին էր իրանահայ համայնքի ուշադրության կենտրոնում: Ցույց է տրվում, որ անկախ այն հանգամանքից, որ իրանական պաշտոնական շրջանակներն արտահայտել են իրենց դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, այնուամենայնիվ դրա ճանաչումն ու դատապարտումը գործնականում կյանքի չեն կոչվել՝ պայմանավորված մի շարք գործոններով, որոնցից առաջնայինը Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունների առկայությունն է, մինչդեռ Հայոց ցեղասպանության ճանաչումը հանգեցնելու էր Անկարայի հետ թշնամանքին:

Ընդհանուր առմամբ, պետք է փաստել, որ Ահմադինեժադի նախագահության շրջանում հայերը շարունակում էին իրենց բնականոն կենսագործունեությունը՝ ջանքերն ուղղելով հայկական ինքնության պահպանմանը, սոցիալ-տնտեսական բարեկեցության ապահովմանը, Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու մայր հայրենիքի հետ կապերի

ամրապնդմանը: Լինելով Իրանի ամենակարևոր քրիստոնյա համայնքը՝ հայերը շարունակում են նպաստել մուսուլման ու քրիստոնյա պետությունների միջև գործակցությանն ու փոխըմբռնմանը:

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները.

- Մ. Ահմադինեժադին հաջողվել է իրանական ազգայնականության խոսույթը դարձնել իրանական քաղաքական օրակարգերից մեկը, իսկ դրա երեք հիմնական տարրերը՝ իսլամականությունը, հեղափոխական հակակայսերապաշտությունը և պարսկական ազգայնականությունը, կիրառել ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացներում: Մեր կարծիքով՝ հոգևոր առաջնորդ-նախագահ հարաբերություններում առաջացած ճեղքի կարևոր պատճառներից մեկն էլ թաքուցյալ իմամ Մահդիի հետ անմիջական կապի մեջ լինելու և նրա կողմից առաջնորդվելու մասին Մ. Ահմադինեժադի հայտարարություններն էին:
- Հատկապես պաշտոնավարման երկրորդ շրջանից Մ. Ահմադինեժադը սկսել էր որոշումների կայացման գործընթացում բացահայտ ինքնուրույնություն ցուցադրել, ինչը սրել էր երկրի ներքաղաքական լարվածությունը: Խամենեի-Ահմադինեժադ քաղաքական պայքարն իր գագաթնակետին էր հասել 2011-2012 թթ., երբ ներքաղաքական և տարածաշրջանային լարվածությունը Թեհրանին քաղաքական, ռազմական, տնտեսական ու սոցիալ-հոգեբանական խնդիրների առաջ էր կանգնեցրել և երկրի ազգային անվտանգության նկատմամբ ուղղակի սպառնալիքի վերածվել:
- ԻԻՀ ներքաղաքական կյանքի առանձնակի ուշադրության արժանի իրադարձություն էր 2009-ի նախագահական ընտրություններին հաջորդած Կանաչ շարժումը, որ բացահայտել էր կառավարող համակարգի ու խմբակցությունների միջև առկա տարաձայնությունները: Իշխող վերնախավը հակակառավարական բողոքի ակցիաների և տարաբնույթ քննադատությունների պատճառով բազմաթիվ իրանցիների աչքին կորցրել էր հեղինակությունը: Որպես Կանաչ շարժման հետևանք, Իրանում մարդու իրավունքների ոտնահարման և խոսքի ազատության սահմանափակումներին առնչվող քննարկումներ էին ի հայտ եկել: Միևնույն ժամանակ Կանաչ շարժման կարևոր և դրական արդյունքը սոցիալական կայքերի (Facebook, Youtube, Twitter, WhatsApp և այլն) տեսքով այլընտրանքային հաղորդակցության ի հայտ գալն էր:
- Կանաչ շարժման ընթացքում իշխանությունները հմտորեն օգտագործեցին «արտաքին թշնամու» կերպարը, որն իբրև թե նախաձեռնել էր բողոքի շարժումները և «բեմադրել» թվացյալ «Գունավոր հեղափոխությունը»՝ հանդիսանալով պահպանողական

էլիտայի շուրջ իրանական հասարակության համախմբող գործոն Իրանի դեմ պատժամիջոցների ֆոնին: Կարծում ենք, Կանաչ շարժումը «Գունավոր հեղափոխություն» կամ դրա փորձ չէր, քանի որ իրանական հասարակությունը և կառավարությունը բավականին մեկուսացած և փակ էին, որպեսզի ենթարկվեին արևմտյան գաղափարական ազդեցությանը: Իրականում հենց իրանական իշխող վերնախավին էին ձեռնտու արևմտյան սպառնալիքի տակ ժողովրդին հանդարտեցնելը և սոցիալ-տնտեսական դժվարություններից ուշադրություն շեղելը:

- Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում Իրանի մոտեցումները փոխվել էին այն խնդիրների նկատմամբ, որոնք կապված էին ինչպես միջուկային ծրագրի, այնպես էլ տնտեսական ուղղությունների հետ: Իրանի վեցերորդ նախագահ Մ. Ահմադինեժադը ծայրահեղ պահպանողական գործիչ էր, ինչը հատկապես արտացոլվել էր միջուկային ծրագրի նկատմամբ որդեգրած անզիջում մոտեցմամբ՝ հանգեցնելով ԱՄՆ և ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների սաստկացման: Սրա հետևանքով քաղաքական խնդիրներին գումարվել էր նաև տնտեսության անկումը:
- Հաշվի առնելով Մ. Ահմադինեժադի նախընտրական խոստումներն ու նախագահության առաջին շրջանում իրականացրած քաղաքականությունը՝ կարծում ենք, որ նրա տնտեսական գաղափարախոսությունը հիմնված էր հետևյալ սկզբունքների վրա.
  - հավատում էր տնտեսական քաղաքականության մեջ կառավարության ակտիվ դերակատարությանը և մեծ հավատ չուներ սեփականաշնորհման նկատմամբ,
  - կարծում էր, որ հարստությունն ու եկամուտները կառավարությունը պետք է վերաբաշխի ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին և աղքատներին,
  - վստահ էր, որ կառավարությունը նավթից ստացվող եկամուտները պետք է օգտագործի զարգացման ծրագրերի վրա, հատկապես երկրի՝ համեմատաբար թույլ զարգացած շրջաններում,
  - իրանական ֆինանսական ինստիտուտները, մասնավորապես՝ պետական սեփականություն հանդիսացող բանկերը դիտում էր որպես պետական քաղաքականության գործիքներ և նվազ հավատ ուներ դրանց առևտրային կամ դրամական դերակատարության վերաբերյալ,
  - արևմտյան տնտեսական գաղափարախոսությունը նրա համար օտար էր և անհամատեղելի իրանական ինստիտուտների հետ:
- Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման տարիներին Իրանի ներքաղաքական դաշտի հիմնական խնդիրներից էին նաև ազգային անվտանգության մարտահրավերը և էթնիկ հակասությունների սրումը: 2005-ից ի վեր քրդերի, թյուրքախոս ատրպատականցիների ու թալիշների շրջանում ներքաղաքական գործընթացներ ու խմորումներ

էին սկսվել, որոնք թեև կային նաև նախկինում, բայց նոր նախագահի պաշտոնավարմանը զուգընթաց կարծես նորովի էին արդիական դառնում: Արդեն 2009-ին Մ. Ահմադինեժադի վերընտրվելն Իրանի նախագահի պաշտոնում քրդերը դիտարկում էին որպես մարտահրավեր իրենց ազգայնական ձգտումներին և սպառնալիք Իրաքում իրանական քաղաքական գերակայության համար: Ատրպատականցիների պարագայում աճող պանթյուրքական, ֆեդերալիստական և ծայրահեղ դեպքերում նույնիսկ անջատողական ձգտումները, որոնց նպատակն անկախ մարզի ստեղծումն էր, հետխորհրդային Ադրբեջանի Հանրապետությանը և կամ Թուրքիային միանալը, իրանական կառավարությանն ավելի ու ավելի էր ստիպում այս էթնիկական միավորի որոշ խմբեր դիտարկել որպես երկրի անվտանգության սպառնալիք և մեծ ուշադրություն դարձնել հետագա զարգացումներին: Թալիշական նահանգ ստեղծելու ծրագիրն անկատար մնալու վերաբերյալ պետք է փաստել, որ Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման երրորդ տարվանից սկսած սրվեցին երկրի սոցիալ-տնտեսական իրադրությունը և առճակատումն Արևմուտքի հետ, ինչի պայմաններում թե՛ երկրի իշխանությունները և թե՛ բնակչությունն առավել մտահոգված էին տնտեսական խնդիրների հաղթահարմամբ, և էթնիկ խմբերին առնչվող հարցերը կարծես թե հետին պլան էին մղվել:

- Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում Իրանի ներքաղաքական կյանքում տեղ գտած զարգացումներից Հայաստանի ու հայերի համար ամենակարևորը թերևս վերաբերում է իրանահայ համայնքում տեղի ունեցած իրադարձություններին և Իրանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Առհասարակ պետք է նշել, որ իրանահայերն Իրանի ներսում իրենց գործունեությամբ և Հայաստանի հետ սերտ կապերով նպաստում են երկու երկրների միջև ջերմ հարաբերությունների պահպանմանը: Ինչ վերաբերում է իրանական պաշտոնական շրջանակների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ապա մի կողմից երկրի ներսում թյուրքախոս համայնքի առկայությունը, մյուս կողմից Թուրքիայի հետ ակտիվ տնտեսական հարաբերությունները խոչընդոտում էին Հայոց ցեղասպանության ճանաչմանը:

Այսպիսով, Մ. Ահմադինեժադից Հ. Ռուհանիին որպես ժառանգություն հասած Իրանը 2005-2013 թթ. վերածվել էր տնտեսական, մարդու իրավունքների պաշտպանության հարցում բազմաթիվ խնդիրներով՝ վատ իմիջով մի երկրի, սակայն դա չէր նշանակում, որ Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման տարիները լիակատար ձախողված են եղել: Մասնավորապես՝ առողջապահության ոլորտում կրկնապատկվել էին պետական ծախսերը, երկրում աճել էր բարձրագույն կրթություն ստացած կանանց թիվը, երիտասարդների ամուսնության և անշարժ գույքի ձեռքբերման ծախսերը մասամբ փորձում էր հոգալ պետությունը: Սոցիալական իրադրության

բարելավման դրական միտումների ֆոնին բնականաբար աչքի էր զարնում հեղհեղուկ տնտեսական իրադրությունը, ինչը հիմնականում ոչ միայն նախագահի և նրա կաբինետի սխալ կամ պոպուլիստական կառավարման, այլև իրանական միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների կիրառման (2006-ից սկսած) հետևանք էր: Սակայն հենց Մ. Ահմադինեժադի վարած քաղաքականությունն էր, որ նպաստել էր միջուկային ծրագրի զարգացմանը, իսկ նրա կոշտ հռետորաբանությունը նպաստել էր, որ ԱՄՆ-ը և Արևմուտքը, գիտակցելով կոշտ քաղաքականության անարդյունավետությունը, զիջումների ճանապարհով նոր հարաբերություններ ձևավորեին իրանական հաջորդ կառավարության հետ:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են

1. Իրանական ազգայնականության խոսույթը Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին (2005-2013), Արևելագիտության հարցեր, № 14, 2018, էջ 441-449:
2. Սոցիալ-քաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում (2005-2009), Արևելագիտության հարցեր, № 16, 2019, էջ 161-171:
3. Տնտեսական իրադրությունն Իրանի Իսլամական Հանրապետությունում Մ. Ահմադինեժադի կառավարման առաջին շրջանում (2005-2009), Այլընտրանք, հուլիս-սեպտեմբեր, 2020, էջ 249-257:
4. Մ. Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները. «Կանաչ շարժում», Գիտական Արցախ, № 3 (6), 2020, էջ 175-184:
5. ԻԻՀ-ում համակարգային փոփոխությանն ուղղված Մ. Ահմադինեժադի քաղաքականությունը, Պատմություն և քաղաքականություն, № 4 (9), 2020, էջ 146-156:
6. Իրանական միջուկային խնդրի ազդեցությունն ԻԻՀ ներքաղաքական իրադրության վրա ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների համատեքստում, Տարածաշրջան և աշխարհ, հատոր XII, № 3, 2021, էջ 5-15:

Петросян Лиана Рубеновна

ВНУТРИПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАНЕ В ГОДЫ ПРАВЛЕНИЯ МАХМУДА АХМАДИНЕЖАДА (2005-2013 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».
Защита состоится 27-го июня, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА,
по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

События во внутриполитической жизни Ирана при Махмуде Ахмадинежаде приобрели особое значение, активизировав сотрудничество между внутриполитическими кругами Ирана и отношениями Ирана с внешним миром, придав им новый импульс. Целью диссертации является изучение событий и процессов, происходивших во внутриполитической жизни Исламской Республики Иран в период президентства М. Ахмадинежада, которые напрямую повлияли на социально-экономическую ситуацию и политический курс страны. Примечательно, что внутриполитические события также повлияли на внешнеполитическую повестку президента, создав новые вызовы и возможности для Южнокавказского региона и всего мира. Исходя из национальных интересах Иран стремится стать региональным лидером в Юго-Западной Азии, поэтому каждая из подсистем региона имеет определенное влияние на региональную политику Ирана. В этом контексте цель Ирана - стать связующим звеном между отдельными государствами региона, что также требует установления экономических отношений, преследующих долгосрочную цель превращения в стратегические и политические союзы.

Вступая в президентское кресло, М. Ахмадинежад объявил о начале нового этапа в политической жизни Ирана, который впоследствии вошел в историю как период, полный экономических трудностей и внешнеполитических проблем. В то же время именно политика М. Ахмадинежада способствовала развитию ядерной программы Ирана, а его жесткая риторика и избегание конструктивных переговоров с Западом вынудили Соединенным Штатам, осознав неэффективность своей жесткой политики, пересмотреть свои отношения с Ираном и получив сигналы о начале переговоров от правительства последующего М. Ахмадинежада, формировать новые отношения путем уступок.

Даже после ухода с поста президента М. Ахмадинежад регулярно делает заявления и дает интервью, участвует в различных общественных и

политических мероприятиях. При этом на сегодняшний день комплексных и полных исследований по теме исследования как за рубежом, так и в Армении не проводилось, поэтому изучение темы дает возможность понять, насколько внутренняя политика М. Ахмадинежада повлияла на отношения с Ближним Востоком и Арменией, особенно если учесть, что М. Ахмадинежад не покидает политическую арену и регулярно участвует в политических событиях.

Анализ политических изменений, произошедших во время президентства М. Ахмадинежада, позволяет глубже понять противоречивые тенденции иранской политической системы и направленность стратегии иранского руководства, последствия которой заметны и сегодня. В контексте этого решающее значение имело изучение этнических проблем, в частности курдского и Атурпатаканского тюркоязычного населения, которое время от времени характеризовалось сепаратистскими проявлениями и использовалось иностранными державами в качестве возможного инструмента давления на Иран.

В диссертации раскрыта религиозно-идеологическая основа, оказавшая решающее влияние на формировании внутриполитических приоритетов М. Ахмадинежада. В диссертации изучаются и анализируются основные направления политики М. Ахмадинежада в контексте внутриполитических и социально-экономических приоритетов Ирана с указанием возможных сценариев их реализации, что совпало со стремлением М. Ахмадинежада поддерживать лояльность идеалам исламской революции и росту иранского национализма. Наконец, М. Ахмадинежад был тем президентом Ирана, который во время своего пребывания в должности стремился изменить характер исламского правления и превратить его в светскую республику.

Диссертация изложена с позиции объективности, на основе фактического материала по тематике, источникам, а также политической методологии анализа, объединения и обобщения профессиональной литературы. Выводы, сформированные в результате сопоставления и анализа фактов, изложены в конце каждой главы и обобщены в разделе «Выводы» диссертации. По сути, диссертация представляет собой полное и систематизированное историко-политическое исследование, посвященное внутриполитическим событиям Ирана 2005-2013 годах и проводимое впервые, а также попытка переоценки некоторых вопросов. Диссертация может быть использована для дальнейших исторических и политических исследований новейшей истории Ирана, внутриполитических событий, религиозных, социокультурных, правозащитных, межэтнических вопросах, экономической и ядерной ситуации. Результаты диссертации могут быть полезны для лекций, семинаров, учебных курсов и региональных исследований по общей стратегии и региональной политике Ирана, может также представлять интерес для Министерства иностранных дел, Службы национальной безопасности и соответствующих подразделений по вопросам иностранных дел и международных отношений.

LIANA RUBEN PETROSYAN

THE INTERNAL POLITICAL SITUATION IN IRAN DURING THE PRESIDENCY OF MAHMOUD AHMADINEJAD (2005-2013)

The defense of the dissertation will take on June 27, at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA.

Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

Events in the internal political life of Iran under Mahmoud Ahmadinejad acquired special significance, intensifying cooperation between the internal political circles of Iran and Iran's relations with the outside world, giving them a new impetus. The aim of the dissertation is to study the events and processes that took place in the internal political life of the Islamic Republic of Iran during the presidency of M. Ahmadinejad, which directly influenced the socio-economic situation and the political course of the country. It is noteworthy that domestic political events also influenced the president's foreign policy agenda, creating new challenges and opportunities for the South Caucasus region and the whole world. Based on national interests, Iran seeks to become a regional leader in South-West Asia, therefore, each of the region's subsystems has a certain influence on Iran's regional policy. In this context, Iran's goal is to become a link between the individual states of the region, which also requires the establishment of economic relations pursuing the long-term goal of becoming strategic and political alliances.

Taking the presidency, M. Ahmadinejad announced the beginning of a new stage in the political life of Iran, which later went down in history as a period full of economic difficulties and foreign policy problems. At the same time, it was the policy of M. Ahmadinejad that contributed to the development of Iran's nuclear program, and his tough rhetoric and avoidance of constructive negotiations with the West forced the United States, realizing the ineffectiveness of its tough policy, to reconsider its relations with Iran and having received signals about the start of negotiations from the government of the subsequent M. Ahmadinejad, to form new relationships through concessions.

Even after leaving the presidency, M. Ahmadinejad regularly makes statements and gives interviews, and participates in various public and political events. At the same time, to date, there have been no comprehensive and complete studies on the topic of research both abroad and in Armenia, therefore, the study of the topic makes it possible to understand how the internal policy of M. Ahmadinejad influenced relations with the Middle East and Armenia, especially if we consider that

M. Ahmadinejad does not leave the political arena and regularly participates in political events.

An analysis of the political changes that took place during the presidency of M. Ahmadinejad allows a deeper understanding of the contradictory tendencies of the Iranian political system and the direction of the strategy of the Iranian leadership, the consequences of which are noticeable today. In this context, it was crucial to study ethnic issues, in particular the Kurdish and Aturpatakan's Turkic-speaking population, which from time to time was characterized by separatist manifestations and was used by foreign powers as a possible instrument of pressure on Iran.

The dissertation reveals the religious and ideological basis that had a decisive influence on the formation of M. Ahmadinejad's internal political priorities. The dissertation examines and analyzes the main directions of M. Ahmadinejad's policy in the context of Iran's domestic political and socio-economic priorities, indicating possible scenarios for their implementation, which coincided with M. Ahmadinejad's desire to maintain loyalty to the ideals of the Islamic revolution and the growth of Iranian nationalism. Finally, M. Ahmadinejad was the President of Iran who, during his tenure, sought to change the nature of Islamic rule and turn it into a secular republic.

The thesis is presented from the standpoint of objectivity, on the basis of factual material on the topic, sources, as well as the political methodology of analyzing, combining and generalizing professional literature. The conclusions formed as a result of the comparison and analysis of the facts are presented at the end of each chapter and summarized in the "Conclusions" section of the thesis. In fact, the dissertation is a complete and systematic historical and political study devoted to the internal political events of Iran in 2005-2013 and conducted for the first time, as well as an attempt to reassess some issues. The dissertation can be used for further historical and political research of the recent history of Iran, internal political events, religious, socio-cultural, human rights, and interethnic issues, economic and nuclear situation. The results of the dissertation can be useful for lectures, seminars, training courses and regional studies on the general strategy and regional policy of Iran, it may also be of interest to the Ministry of Foreign Affairs, the National Security Service and relevant departments for foreign affairs and international relations.